

Հաշվետվություն

ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ում
01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական
գործունեության աուդիտորական ուսումնասիրությունների վերաբերյալ

Տնօրեն	Ս. Իվանյան
Հաշվապահ	Գ. Կարապետյան
Հասցեն	Անդրկավան
Հեռախոս	6-13-15

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2014թ. «Ներքին
աուդիտի բաժնի» տարեկան ծրագրի, մեր կողմից իրականացվեց Սյունիքի մարզի
«Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 01.01.2011թ. առ 01.01.2014թ.
ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

Մենք աուդիտի ենք ենթարկել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը
01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանը, հաշվետու ժամանակաշրջանի
ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Այս
ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է
կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտն ընդգրկում է նաև ֆինանսական
հաշվետվություններում արտացոլված տվյալների և համապատասխան
ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգումը, գնման
գործընթացի իրականացումը, կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքները,
ֆինանսական փաստաթղթերի կազմման գնահատումը, ղեկավարության կողմից
իրականացվող կառավարումը, խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառման և
պահպանման ընթացքը, դասագրքերի վարձակալությունը:

Աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ
ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք
ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին
ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Մեր պարտականությունն է
իրականացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք կազմակերպության
ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

Կազմակերպությունը ունի կանոնադրություն, որը գրանցված է իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում՝ առակ է վկայականը:

Կազմակերպությունում գործում է վարձու աշխատողների աշխատանքի ընդունման,
նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման
վերաբերյալ հրամանագիրք, դրանք սահմանված կարգով համարակալված, թելակարված
եվ կնքված է կազմակերպության կնիքով:

Ուսումնասիրության պահին կազմակերպության դրամարկղում կանխիկ դրամի
մնացորդ հաշվապահորեն և փաստացի չի եղել:

2011թ. հունվարից դպրոցում սովորում էր 13 աշակերտ և գործում էր 2.5 դասարան,
աշխատողների թիվը կազմում էր 17 մարդ, այդ թվում 12 մանկավարժ, իսկ սեպտեմբերից
սովորում էր 17 աշակերտ, գործում էր 2.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր
15 մարդ, այդ թվում 10 մանկավարժ:

2011թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել
12591.1 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 12591.1 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ
01.01.2011թ.՝ 167.9 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 12187.0 հազ.դրամ,

փաստացի ծախսը կազմել է 12181.2 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 572.0 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 96.7 տոկասով:

Առ 01.01.2012թ. կազմակերպության դեբիտորական պարտքը կազմել է 5.8 հազ. դրամ, իսկ կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Դպրոցի ջեռուցումը կատարվում է վառարաններով՝ փայտով: 2011թ. ջեռուցման համար գնվել և ծախսվել է 10.8 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 129.0 հազ. դրամ: Զեռուցումը կատարվել է 3 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.045 խոր. մետր փայտ:

2011թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 190.5 հազ. դրամ:

2011թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերը ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2011-2012 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 131 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 42.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2010-11 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 2 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

2012թ. հունվարից դպրոցում սովորում էր 18 աշակերտ և գործում էր 2.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 14 մարդ, այդ թվում 9 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 18 աշակերտ, գործում էր 2.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 14 մարդ, այդ թվում 9 մանկավարժ:

2012թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 13316.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 12744.3 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2012թ.՝ 572.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 12743.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 12748.8 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 573.2 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 95.7 տոկասով:

Առ 01.01.2013թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2012թ. ջեռուցման համար գնվել և ծախսվել է 11.5 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 138.0 հազ. դրամ: Զեռուցումը կատարվել է 3 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.048 խոր. մետր փայտ:

2012թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 173.4 հազ. դրամ:

2012թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2012-2013 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 154 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 47.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2011-12 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 2 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

2013թ. հունվարից դպրոցում սովորում էր 18 աշակերտ և գործում էր 2.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 14 մարդ, այդ թվում 9 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 15 աշակերտ, գործում էր 2.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 14 մարդ, այդ թվում 9 մանկավարժ:

2013թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 13309.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 12235.8 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2013թ.՝ 573.2 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 13003.5 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 305.5 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 97.7 տոկոսով:

Առ 01.01.2014թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

2013թ. դպրոցի ջեռուցման համար գնվել և ծախսվել է 10.4 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 137.0 հազ. դրամ: Զեռուցումը կատարվել է 3 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.043 խոր. մետր փայտ:

2013թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2013-2014 ու. տարվա համար վարձակալությամբ տրվել է 162 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 48.0 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2012-13 ու. տարվա համար ստացվել և տրվել է 2 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

Արտաբյուջե.

Կազմակերպությունը ունի արտաբյուջետային հաշիվ, որի հիմնական մուտքը ստացվում է «Քաջարան» բարեգործական հիմնադրամից: Ստացված գումարները հիմնականում ծախսվում են դպրոցի կարիքների և միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Կատարված աշխատանքների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն է ներկայացվում նաև «Քաջարան» բարեգործական հիմնադրամին:

Առ 01.01.2011թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 0.9 հազ. դրամ, մուտքը 2011թ. կազմել է 168.8 հազ. դրամ, ծախսը կազմել է 169.2 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 0.5 հազ. դրամ:

2012թ. մուտքը կազմել է 168.8 հազ. դրամ, ծախսը կազմել է 154.9 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 14.4 հազ. դրամ:

2013թ. մուտքը կազմել է 160.2 հազ. դրամ, ծախսը կազմել է 174.4 հազ. դրամ, մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 0.2 հազ. դրամ:

Կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին, բացառությամբ գնումային գործընթացի:

Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվեց, որ 2011թ. նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 96.7 տոկոսով, 2012թ. կատարվել է 95.7 տոկոսով, 2013թ. կատարվել է 97.7 տոկոսով:

Կազմակերպության դեբիտորական պարտքը առ 01.01.2012թ. կազմել է 5.8 հազ. դրամ, որը 2012թ. ընթացքում մարվել է, իսկ կրեդիտորական պարտքեր հաշվետու ժամանակահատվածում չի ունեցել:

Հաշվետու ժամանակաշրջանում նախահաշիվներով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Ապրանքանյութական արժեքների ստացումը և ծախսերը կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան

Մենք կարծում ենք, որ աուդիտի ընթացքում հավաքագրվել է բավարար և հիմնավոր տեղեկություններ մեր կարծիքը հայտնելու համար:

Մեր կարծիքով կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական հաշվետվությունները, տնտեսական և կազմակերպչական գործառույթները կազմակերպության ֆինանսական վիճակի, դրամական հոսքերի, տնտեսական և կազմակերպչական գործունեության մասին տալիս են հիմնականում ճշմարիտ և իրական պատկեր ՀՀՀՍ-ի, ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
<<Ներքին աուդիտի բաժնի>> պետ՝

Է. Միրզոյան

Գլխավոր մասնագետ՝

Ս. Վեզիրյան

13 մարտ 2014թ.

